

ի վերջոյ յայտարարեց թէ՛ իր յորեւեանի առթիւ հաւաքուած 1098.59 սակիէն 100 սակիէն նուիրէ ուսուցչաց օգնութեան անառիկն 30 սակի Աստույ Ներսէսեան վարժարանի ի նպաստ կատարուած հանգանակութեան 20 սակի Մամուրեանի յիշատակին կանգնուելիք արձանին համար և աւելցուց թէ՛ Պէրպէրեան վարժարանը կ'ըստանձնէ շարունակաբար 5 որբ պահել և հաւաքուած գումարն սոկոսին ի հաշիւ Պէրպէրեան էֆ. ի այս վերջին յայտարարութիւնները որոշարեղոտ ծախելով շնորհաւորուեցան։ Ամենէն ետք Ս. Պատրիարքը նկատելով որ սոսուգիւ ժամանակը անցած է, սաչաւի մը միայն ըսաւ թէ՛ Պէրպէրեան էֆ. ինք կրցած է իրմով բարձրացնել իր պաշտօնը, և ատոր համար է որ արժանացաւ այս հանդէսին ու փառաւորման։ Նա գիտցաւ ինքզինքն օգտակար ու սիրելի ընծայել իր սաներուն, որք իրենց երախտագիտութեան ապացոյցը կուտան ալիպէսով, և հրաւէր կարգաց որ բոլոր ուսուցիչներն ալ հետեին անոր օրինակին, ու պիտի պատուուին ու յարգուին։ Հանդէսը փակուեցաւ պահպանելով և կարճատեւ տէրունական աղօթքով մը։

Բարեկ զանուոյ Սամուէլեան եղբարք Սկիւտարի մէջ 3400 սակի արժողութեամբ իրենց սեպհական մէկ տունը Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ նուիրած ըլլալով փափաղ յայտներ էին որ այդ տունը յատկացուի թաղին մանկաւոյն իրը վարժարան։ Ս. Պատրիարքը նոյն նուիրատուաց օրհնութեան գիր մը գրեւ և նոյն եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդին ալ պատուիրեւ էր որ ամէն տարի Տեառնդատալի տօնին յատուկ Ս. Պատրիարք մատուցուի յիշեալ նուիրատուներուն ջնջեցելոց հոգւոյն համար։

— Սիւէն հասած տեղեկութիւններ կը հաստատեն թէ ծերունազարդ տեղապահ Տ. Կիրակոս եպիսկ. կը շարունակէ իր ամբողջ հոգածութիւնը վանքին գոյքերուն անվճար պահպանութեան և ժառանգաւորաց վարժարանին ու որբանոցին բարեկարգ կերպով շարունակութեան համար։ Աղթամարէ հասած տեղեկութիւններ ալ ճիշտ հակառակը կը հաստատեն։ Կղզիին մէջ գտնուած ժառանգաւորաց դպրոցը 15 աշակերտ ունի։ 12-էն 13 տարեկան, որոնք մօտակայ թեմերէն են։ Այդ խեղճերը դատապարտուած են այդ ապառաժ, չոր կըղզիին մէջ կենալ և սափակ կեանք մը վարել, ու տնելով միշտ չոր հաց, թթու թանով, և երբեմն քանի մը օրուան քացխած մածունով, քիչ անգամ եղեղէն և շաւ քիչ բացառութեամբ մսեղէն կերակրով կը խմեն Տորի աղի ջուրը, որ անվարժ մէկին նողկանքը կը շարժէ։ Ահանատեաններ կը վկայեն թէ ատոնք շատ վտիտ են ու գեղանայ, մեղամաղձոտ և կարծես թէ մէյմէկ ծերուկներ են մանկական մարմիններով։ Ահա այս վիճակին մէջ

դատապարտուած են ի բերան ուսանելու անկարող վարժապետի մը միջոցով իրենց աւանդուած ոչմեթոտիկ դասերը։ Աւանքի մէջ կան այժմ միայն երկու վարժապետներ, սարկաւազ մը, մէկ երկու անտեսուհիներ, և մէկ երկու պատանի սպասաւորներ. յաւէտ դժգոհ իրենց վիճակէն։ Իսկ Նսրէն և Դանիէլ վարժապետները Ախուանց կը նստին, անփոյթ այս ամէն բաներուն հանդէպ, Մանաւանդ որ այս երկուքը անհամբարաշխ են իրարու հետ. մէկը միւսին ըրածին կը հակառակի, փոխանակ միութեամբ գործելու ի նպաստ վանքին։

ԼՈՒՐԶ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ինչպէս «Արարատ»-ի նախընթաց համարներում, նոյնպէս եւ առաջ շատ անգամ առիթ ենք ունեցել զրելու «Մշակ»-ի (վերջերս նաեւ Նորան ընկերացած «Մուրճ»-ի) թիւը հայեացքների ու յարձակումների դէմ, քայց եւ յամախ անուշադիր ենք թողել այդ յարձակումները՝ երբեմն մեզինց անկախ պատճառներով եւ աւելի Նորա համար, որ իրաւունք չենք համարել «Արարատ»-ի էջերը դատարկ քանակուով ու անծնական վէների համար գործ դնել, այլ աշխատել ենք միայն թիւրիմացութիւններ պարզել, հասարակական նշանակութիւն ունեցող խնդիրներով եւ երկույթներով զբաղուիլ։ Սակայն նոյն խակ այն առանձնայատուկ ոճն ու քննադատութեան եղանակը, որ մշակել է այդ լրագիրը ժամանակի ընթացքում՝ մանաւանդ հայ հոգևորականութեան, «աստուածաբանների», «խաւարամիտների» վերայ գործած մշտական յարձակումների միջոցաւ, եւ որ ծայրահեղ կատարելութեան է հասցրել Նորա աշխատակից Լէօ մի հասարակական երեւոյթ է, որի վերայ արժէ առանձին ուշադրութիւն դարձնել։ Այս նկատմամբ մեր դիտողութիւններն անելու պատեն առիթ ներկայացրեց այն հանգամանքը, որ պ. Լէօն, սովոր լինելով ծաղրել, անարգել, նշաւակել մարդոց, ինչպէս սիրտը կուգէ՝ խիստ զայրացել է այս անգամ, որ մենք համարձակութիւն ենք ունեցել փոքր ինչ հեզնական ընգում խօսելու Նորա մասին՝ «Արարատ»-ի նախընթաց համարում։ Նորա ընդած դիրքը պատկերացնելու համար մենք յիշել էինք Վասակ Մամիկոնեանի Պարսից Եապուն թագաւորին ասած խօսքերը, եւ անա նա, շարացած, որ

իր մենք նորան «Վասակ ենք անուանել», ծաղրել ենք՝ ինչ կարկուտ է տեղում մեր գլխին միաժամանակ թէ «Մշակ»-ի եւ թէ «Մուրճ»-ի մէջ:

— Բայց աւելի լաւ է, որ ուղղակի Ձեզ հետ խօսենք՝ պ. Լէօ: Դուք այնչափ հմուտ պատմագետ էք, որ գիտէք ի հարկէ, թէ Վասակ Մամիկոնեան մի շատ պատկառելի հեղու է եղել եւ նորա հետ համեմատուելը Ձեզ պէս մեծ մարդու համար իսկ անպատուութիւն չէ: Ընդունենք այնուամենայնիւ, որ մեր վարմունքը անտեղի է եղել եւ հոգեւորակաւորն անպայել. եթէ Դուք հոգեւորականի փառանքն տեղ դնում էք, ինչպէս էք թույլ տալիս Ձեզ հապա փառանքն գլխին «ծաղրածուի թաղիքէ գլխարկ» դնել, խեղճատակութիւնների սուարկայ դարձնել այդ փառաջան: Փառաջան եւս մի կողմ՝ դնենք ու ասենք, թէ մենք եւս Ձեզ պէս մի աշխարհական ենք, դեռ Ձեզանից շատ քանով պակաս: Իբրեւ «միջակութիւն» մի փայլուն հանձարի մօտ, Դուք որ Ձեր անձի արժանապատուութիւնն այդպէս պահել գիտէք՝ ինչ իրաւունքով ոտի տակ էք տալիս ուրիշների պատիւը, ինչ իրաւունքով, ահա այս քանի տարի է, քերաններդ եկածն ասում էք օրինակ — Բանների հասցէին: Առնենք նոյն իսկ Ձեր փառաբանած «Մշակի № 167-ը», միթէ իրօք անմիտ, անբովանդակ լուսանքի մի հեղեղ չէ այդ: Պատին էք սեղմել երեւելի. — ինչով արդեօք, հետաքրքրական է. նրանով որ մենք Ձեր դիմաց փառտեր ենք դնում: Իսկ դուք թաւում էք, «Զրիակներ, պորտաբոյժ, հացկատակ. — որ ինչ. ինքներդ Ձեզ հաշիւ տալիս էք, թէ ում, ինչ էք ասում. «Մշակ»ի 203 հ.ում՝ ասածները Ձեզ վերայ դարձրէք ու տեսէք՝ որչափ սազ են գալիս: — «Հայոց ազգի քարեկամները գիտէք ովքեր են: Նրանք, որոնք խլում են ժողովրդի իրաւունքները, որոնք եզուիտական միջոցներով կղերական ոգի են մոցնում՝ մեր ժողովրդական եկեղեցու մէջ, որոնք անգրագէտ քահանաների լէգէօններ են փաթմարում հայ ազգի շինքին, եւ համարձակութիւն են ունենում՝ փաստաբանել, թէ տգիտութիւնը երջանկութիւն է. — Այդ ովքեր են, պ. Լէօ:

աստուածաբանները, Ս. Էջմիածնի այն երիտասարդ միաբանները, որոնք յանդգնութիւն են ունեցել դեռ աշխարհի շարն ու քարին չուսած սեւ վերարկու հագնելու — այնպիսի մի ժողովրդի մէջ եւ այնպիսի ժամանակում, ուր այդ վերարկուն յանշտիս արհամարհում էր, եւ այլ եւս գրեթէ ոչ որ չէր համարձակում հագնել. որոնք, լուսաւոր աշխարհի կենտրոններում լինելուց յետոյ՝ իրենց ուղարկողներին չեն խաբել եւ իրենց կողմը խաղ դարձնելով այնպիսի կենցաղ ու վրադմունք ընտրել, որ — վերադառնալիս հայրենիք՝ լուսամիտների, մամուլի ներկայացուցիչների առաջ փայլէին: Կարապետ, Յուսիկ, Դարեգին վարդապետներն են ժողովրդի իրաւունքներ խլել, եզուիտական միջոցներ գործ դրել ու կղերական ոգի մոցրել: ազէս քահանաներ ասպարէզ հանել ու տգիտութիւնը շատագովել: Իհ, պ. Լէօ, ինչպէս կարելի է այդ աստիճան կուրացած լինել. ասենք թէ «ժողովրդի իրաւունք», «եզուիտական միջոց», «կղերական ոգի» այնպիսի քառեր են, որ ինչպէս ուզէք գործ կածէք, եւ Դուք արդէն այնչափ էք գործածել, որ իրենք իրենց գրել տակ են գալիս: Ինչ խելք է, անգրագէտ քահանաների քաղմանաւու պատճառ համարել Ճեմարանի ուսուցիչներին՝ այն անձանց, որոնց ամբողջ հոգսը, աշխատանքը հէնց կրթութեւ քահանաներ պատրաստելն է:

Դուք երեւակայում էք Ձեզ իբրեւ մի վերին նախասահմանութիւնից կարգուած — որոնք է Ձեր որոնած կեղտն ու ապականութիւնը: Մենք ենք այն սեւագլուխները, որոնք խռովութիւն են մոցնում՝ ամեն տեղ, ուր ոտք են դնում, որոնք մի անտանելի անիշխանութիւն են հաստատել մեր եկեղեցական վարդապետութեան մէջ, մի անիշխանութիւն, որից մարդու մազերը քիզ — քիզ են կանգնում. — բայց չէ՞ որ մեզանից ոչ մէկը եկեղեցական վարչութեան մէջ իսկական մտքով չի էլ եղել. ինչ դիքք ենք ունեցել մենք, ինչ մեծ մեծ — կամ թէկուզ փոքր — պաշտօններ, որ իշխանութիւն ու անիշխանութիւն հաստատելը մեզանից կա-

խուած լինէր. մեր ո՞ր գործերի համար են Ձեր մագերէն այդպէս «բիզ-բիզ կանգնում» : Անորոշ հասցէներով աջ ու ձախ հարուածներ սփռելը գուցէ շատ խոհեմ տակտիկա է, բայց վայել չէ այնպիսի մի քաջամարտիկ հրապարակախօսի՝ արդարութեան ու ծշմարտութեան պաշտպանի, որպիսին Դուք էք կամենում լինել : Մեզ, աստուածաբանութիւն ուսած երեք վարդապետներնս էք «Էջմիածնի ձրիակներն» — պորտաբոյժ, հացկատակ վարդապետներ, անուանում : — ու կարծում էք թէ երեւելի քաջութիւն էք անում : Դուք կարող էք զաղափարով մեզ ու մեր ամբողջ գործունէութեանը հակառակ լինել, առոշինչ կամ վնասակար համարել այդ գործունէութիւնը, ամուր պահել այն նախապաշարմունքը, թէ եկեղեցւոյ պատմութիւն, ս. Գրքի բացատրութիւն Եւլն սովորելն ու սովորեցնելը մահացու մեղք է հոգեւորականի համար : — այդ Ձեր գործն է. բայց «ձրիակներ ու պորտաբոյժ» անուանել մի մարդու, որ տարիների ընթացքում ո՛չ միայն գործի օրերը զբաղմունքից աչք չի բաց արել, այլ եւ կիրակէ, տօն, արծակուրդ չի իմացել դասից ելեր դպրոցական — վարչական գործերով է զբաղուել, մի ազատ ժամ է ունեցել ձեռագիրներ ու զրքեր է քրքրել, իւր միաբանութեան թերթի համար աշխատել, իւր վանքի եւ իւր կոյման վերաբերեալ գործերով այս ու այն կողմ գնացել : — Ի՞նչի նման է այդ ո՞ւմ էք ծառայութիւն մատուցանում արդեօք ծշմարտութիւնն այդպէս կառուր ձգելով : «Աստուածաբան» քառն առելու ընկել էք : Ձեռներդ խղճի վերայ դրած մի հարցքէք ինքներդ Ձեզ. սլարզ զաղափար ունիք, մի անգամ Ձեզ հաշիւ տուէ՛լ էք, թէ ինչ մարդիկ ենք մենք, ի՞նչ համագումների, ի՞նչ կրթական պաշարի տէր, եւ ի՞նչ ենք շինում : Ծեմարանում ունեցած մեր գործունէութեան մասին դուք Ձեր տեղեկութիւններն առնում էք այնպիսի աղբիւրներից, որպիսին է վերջին ժամանակ «Մշակ»-ի եռամսհուն թղթակից Բ. Ի. : Դուք գիտէք անշուշտ ո՞վ է դա. գիտէք, թէ ինչո՞ւ վայել չէ մեզ նորա յարձակումների վերայ ուշադրութիւն դարձնել, նորա դէմ՝ հերքումներ գրել, բայց վաճառ էք հանում

նորա բերած ապրանքը. ինչո՞ւ, ծշմարտութեանը ծառայած լինելու համար : — Այդ քաւական չէ. Դուք օրինակ Կ. Պոլսոյ «Սուրհանդակ»-ից առնում էք մի լուր, որի Կովկասի թերթերից քաղած լինելը գիտէք եւ որ հերքուած է կենդանի փաստերով Ձեր յարձակման ենթակայ «Արարատ»-ի նոյն համարի մէջ, եւ ապա ներկայացնում էք այն իբրեւ ապացոյց «Էջմիածնի դատարկախօս աստուածաբանների - ճնշողներով քիկլամների» ստութեան. ինչո՞ւ արդեօք. քարեխղճութեան արձան կանգնեցրած լինելու համար :

Կարելի էք սպասել, որ Դուք աւելի արդարադատ կլինէիք մեր նկատմամբ՝ զոնէ Ձեր աչքի առջեւի գրուածները քննելով. սակայն որչա՞նի տարօրինակ է Ձեր դատողութիւնը նաեւ այս դէպքում : — Աստուածաբանները յօդուածներ են գրել «միաբնակութեան եւ երկաքնակութեան հարցի» վերաբերեալ, ուրեմն ոչինչ հասկանալ, իրական կեանքի ո՛չ մի երեւոյթի մասին կարծիք յայտնել չեն կարող : — Այդ երեւելի փաստը Դուք եւ Ձեր գործակիցներն ուրիշ անգամներ եւս առաջ էք բռնել ու այնչափ շլացած էք նորա տրամաբանական պայծառութեամբ, որ ի հարկէ ո՛չ մի հակառակ բացատրութիւն ըմբռնել չէք կամենայ : Թո՛ղ տուէք այնուամենայնիւ փորձել զոնէ կողմնակի յիշողութիւններով փարատելու այդ շլացումը : — Անցեալ տարի «Արարատ»-ում մի յօդուած էր լոյս տեսել Թոնդրակեցիների մասին. Դուք հարկ համարեցիք «Մշակ»-ի մի ընդարձակ առաջնորդող նուիրել այդ յօդուածին՝ պարզելու համար, թէ որչա՞նի մեծ կարեւորութիւն ունին այդպիսի պատմագիտական ուսումնասիրութիւնները. — գովելի նախանձախնդրութիւն : Բայց չէ՞ որ քնութեանց խնդրի մասին զրոյ աստուածաբանը նոյն այդ Թոնդրակեցիների մասին մի ամբողջ գիրք է գրել, մի ընդարձակ յօդուած էլ գերմանական գիտնական մի թերթի, մի երկու յօդուած «Արարատ»-ի մէջ. ասացէ՛ք խնդրեմ, ինչո՞ւ այդ ամբողջ աշխատութիւնը Մշակ վերոյիշեալ յօդուածի քառորդ արժէքը չունի Ձեր աչքում : — ոչ միայն արժէք չունի, այլ եւ փաստ է հեղինակի անշնորհութեան, ասկիկարութեան, հացկատակութեան

եւն եւն: Ինչո՞ւ նոյնպիսի փաստեր են աստուածաբանի ուսումնասիրութիւնները «Բնութեանց խնդրի» եւ նման պատմական խնդիրների մասին: Յիրաւի նա ամօթ ու նախատըք է համարում այն տգիտութիւնը, որ Ձեր ու Ձեր զաղափարակիցների կարծիքով պարծանք է. — ո՛չ միայն հայ քրիստոնեայ, այլ եւ Հայ. եկեղեցւոյ պաշտօնեայ լինել ու շիմանալ թէ այդ եկեղեցւոյ դաւաճութիւնն ինչո՞վ է տարբերուում ուրիշների դաւաճութիւնից. ինչո՞ւ նա պատմական անցիալում՝ առանձնացել, ինքնուրոյն զարգացում է ունեցել ինչո՞ւմ է այդ ինքնուրոյնութիւնը եւ ուժքնր են եղել նորա հիմնադիրներն ու պահպանողներն, ի՞նչ սկզբունքով: Բայց երբ նա այդ հարցերին պատասխանել է աշխատել, անձանօթ մնացած առաջնակարգ պատմական աղբիւրներ է մէջ տեղ քերել եւ ցոյց տուել, որ Կոմիտաս կաթողիկոսը միայն ս. Հովսիսիմէի վանքը չի լինել, Յովնան Օմնեցին փառահեղ զգեստներով ամիրապետին ներկայացել, այլ որ ազգեկեղեցւոյ խիստ նշանաւոր ներկայացուցիչներ են եղել դորա. որ Զ. դարը մի անապատ է մեր եկեղեցական — ազգային պատմութեան համար, ինչպէս երեւացել է մինչեւ այժմ՝ այլ կեանք, շարժում, մաքառում՝ ազգային ժողովներ, Բաքէն, Ներսէս Աշտարակեցի, Յովնանէս Գաբեղոնցի, Մովսէս Նդարաղեցի կաթողիկոսներ՝ նախարարների ու եպիսկոպոսների ամբողջ շարքեր կանայրտեղ, որոնք գործել են այլ կերպ, այլ պայմաններում՝ եւ ժամանակներում, քան մինչեւ այժմ՝ մեզ հաստացրել էին, եւ նոցա գործունէութիւնը խիստ մեծ նշանակութիւն է ունեցել մեր եկեղեցւոյ ապագայ պատմութեան համար. — կամո՞ւմ էք միթէ իմաստութեան եւ քաջութեան գեղեցիկ ապացոյցներ էք տուել, որ ելբը աղադակել ու փոշի էք քարօրացրել, թէ աստուածաբանները կրօնական վէճեր են յարուցանում այլադաւան ազգակիցների մէջ տեղութիւն սերմանում, միջնադարեան մարդիկ են, — իրաւունք չունին ազգային եկեղեցին պաշտպանելու այդ օտարացած ազգակիցների միջնադարեան մոլորութիւնների դէմ հերքելու նոյա թելադրած պատմական սխալները: Սա-

կայն չէ՞ որ Դուք ինքներդ այդ տեսակ իրաւունքներ վայելում էք. կարող էք մինչեւ անգամ Զաղկեդոնի ժողովի մասին խօսել, ինչպէս խօսում էիք նորերս Աննիակու գիւղը քննադատելիս. զայրանալ թէ ինչպէս օտարները պատմական ճշմարտութիւնները խեղաթիւրում են՝ իրենց դաւանական հայեացքներին տեղ անելու համար. — եւ անուամենայնիւ կասկածի չենթարկել ամենեւին Ձեր փառահեղ ազատամտութիւնն ու լուսամտութիւնը: Ձէ՞ որ Ձեր «Մուրճ»-ի վերջին համարում՝ գնահատութեան արժանացաւ նաեւ այն «Թղթոց գիւղը», որից մի քանի թուղթ կանխել տպել էր, եւ պատմական տեղեկութիւններ առել Ձեր դատապարտած «Բնութեանց խնդրի մասին» նոյն աստուածաբանը:

Զարմանալու ի՞նչ կայ իսկապէս. այն աննման փաստաբանութեամբ, որ օրինակելի արտայայտութիւն է գտել Ձեր «Գղերական Սոփեստութիւնների» * մէջ, ի՞նչ ճշմարտութիւն կարելի է գլխի վերայ կանգնեցնել: — Որ դուք քաջ էք պ. Լէօ, ո՛չ Ս. Մ. ի, ո՛չ էլ ուրիշ շատ աւելի մեծ անունների հեղինակութիւնից չէք ակնածում՝ այդ մասին ամենեւին կասկած չունիք. բայց դիտէք ո՞րն է ըստ մարդոց համար ամենամեծ, հրապարակախօսի համար միակ անհրաժեշտ քաջութիւնը. — համարձակութիւն ու նենալ ճշմարտութեան աչքի մէջ նայելու, ինչ ծելով եւ ում՝ կողմից կուգէ յայտնուի այն. իսկ Դուք Ձեր ըստ յոխորտանքով մէկ տեղ չունիք այդ համարձակութիւնը. Դուք միայն զօրեղ քառեր էք շոյալում այնտեղ, ուր զօրեղ փաստեր պէտք են, եւ երեւակայում էք, որ դիմացինը կշշկուի ամէն անգամ Ձեր հանած աղմուկից ու չի նկատի՝ ինչպէս սահեցիք ճշմարտութեան կողքից, առանց նորան դիպչելու: Բայց մեր նկատմամբ ապահով կարող էք լինել, որ ամենեւին չենք հիանում Ձեր ճարտարարուեստ դարձուածներով: Եթէ Դուք Ս. Մ. տառերի վերայ ուշադրութիւն չէք դարձրել, ինչի՞ցն էք եզրակացնում թէ մենք դարձրել ենք. մեր զրածի մէջ մի խօսք, մի ակնարկ կայ միթէ ի պաշտ-

պանութիւն պ. Մանդինեանի՝ նորա թարգմանութեան կամ՝ նոյն իսկ Փարբարի քարոզների ըուն արժէքի մասին: Դուք ասել էք, «որ մեզ քարոզազրբեր չեն հարկաւոր»: շատ քարի մեր ըողոր առարկութիւններն էլ հէնց դորա դէմ են՝ այն, մեր կարծիքով՝ անհեթեթ մտքի դէմ, թէ ժամանակակից ամենանշանաւոր քարոզի քարոզները՝ ամենաերեւելի «Կրօնական գրող»ի ամենապատուական գրուածքն անգամ՝ թարգմանելը ապարդիւն աշխատանք է, յետամտացութեան նշան: մեր ժողովրդին դէպի միջնադարեան խաւարը տանելու միջոց: Արդ, ի՞նչ նոր փաստեր էք բերում Դուք ի պաշտպանութիւն այդ նշանաւոր գաղափարի: — Անգլիացին Փարբարի քարոզներից յետոյ կարող է կարդալ Դարվին, Սպենսէր: Իսկ Հայրը: — Հայն էլ կարող է կարդալ 1էօ, 1. Ս., Տ. Յ. եւլն. ի՞նչ դուրս եկաւ դորանից: Դուք այն ասացէք մեզ, թէ քարոզ գրելն ու կարդալն առհասարակ ներքին է, թէ ոչ. եւ եթէ ներքին է, ի՞նչ բովանդակութեամբ արդեօք եւ ո՞ւմ համար. միայն լանգլիացի, թէ նա եւ մեզ՝ խեղճ հայերիս համար: Այն եւս ընդունենք, որ «Քահանայական խնդրի» հեղինակի ու Չեր երազած ապագայ քահանաները մեզ պէս «ողորմելի միջարկութիւններ» չպէտք է լինին՝ մեր աշակերտների շարքերից չելնեն, այլ ինչ որ աներեւոյթ իմաստութեան ուկիւսնոսի խորքից, ու բոլորեքեան առանց քացառութեան Փարբարից մեծ քարոզիչներ հանդիսանան. այնուամենայնիւ, — ի՞նչ կլինի այնուամենայնիւ նոցա քարոզների նիւթը. «մեր ընցեալում» չի լինի, Փարբարի քարոզների նման էլ չի լինի. ի՞նչ կլինի հապա. — Աստուծոյ եւ Նորա ամենակարող զօրութեան մասին եւս խօսք կլինի՝ նոցա մէջ, թէ միայն հողի, ջրի եւ օդի մասին: Ինչո՞ւ խուսափում էք այդ հարցերի պատասխանը տալուց: Չէք ընդունում միթէ, որ Փարբարի քարոզների նկատմամբ Չեր տուած դատողութիւնը ստիպում է այդ ըլոր հարցերը դնել Չեր առաջ՝ դնել այն լուրջ հարցը, թէ արդեօք ինչպէս էք հասկանում արժանաւոր հոգեւորականի կոչումը. Աստուծոյ տան պաշտօնեայ է նա եւ աւետարան պէտք է քարոզէ, թէ յանձնառնելով այդ պաշտօնէութիւնն իրեն պատրուակ,

իրեն անհրաժեշտ շարքը՝ սոսկ մի հասարակական գործիչ լինի շրջապատողների համար:

Մեզ աստուածաբաններիս Դուք դատաւարտում էք անխուսափելի անկման եւ «լուսաւոր, եռանդուն, ժաւանակի ոգով տոգորուած գործունէութիւն» էք պահանջում. շնորհ արէք, քացատրեցէք՝ ո՞րն է լուսաւոր գործունէութիւնը հայ հոգեւորականի համար, — առանց մոռանալու ի հարկէ, որ խօսքն այստեղ «միջարկութիւնների» եւ «տաղանդների» մէջ եղած տարբերութեան մասին չէ, այլ գործունէութեան եղանակի մասին, եւ որ Դուք միայն Էջմիածնի անշնորհք աստուածաբաններին չէք դատաւարտում, այլ յանձին Փարբարի աշխարհիս ըլոր աստուածաբաններին՝ Եւրոպայում՝ գործող ըլոր հոգեւորականներին. որովհետեւ նոցա մէջ ոչ մէկը չկայ, որ աստուածաբանութիւն սովորած չլինի, որ եկեղեցւոյ մէջ հողի ու ջրի մասին խօսի, եւ ոչ Աստուծոյ մասին: Ընդունենք որ մենք «հնադարեան մտքերով տոգորուած, տգէտ, անպատրաստ» հոգեւորականներ ենք եւ «քնացնող, յետադէմ» քարոզներ» ենք տալիս. դորա համար էլ մեր ժողովուրդը իր հոգեւոր պէտքերով չի հետաքրքրուում. ի՞նչ էք կարծում, ինչպէս է լինում, որ անգլիացին հետաքրքրում է. ինչիցն է, որ նա ամէն կիւրակէ Դարվինի գերեզմանի մօտով անցնում, գնում նստում է՝ Փարբարի յետադէմ քարոզները լսելու. * միթէ նորա համար, որ երբ նա շատ «մոռաւոր կերպակուններ է վայելել Փարբարից առաջ եւ Փարբարից յետոյ», ախորժակը քացում է այժմ էլ այդ անհամ կերակրւոր վայելելու: — Եւ Դուք երեսն ունիք, այդ ողորմելի պատմաաբանութեամբ՝ «ողորմելիներ» պոռալու մեր երեսին: Եւ Դուք զուարմանում էք դեռ Չեր սրամտութեամբ, որ Փարբարի քարոզների կողքին կարող էք է. քահանայ Նազարեանի քարոզները դնել եւ սպացուցուած համարել, որ Փարբարի քարոզների նման շատերը կան մեր զրականութեան մէջ: Եթէ այդպէս է, եթէ քարոզը քարոզ է՝ լինի է. քահանայի

* Փարբար պաշտօնավարում է Վեստմինսթարի տաճարում, ուր թաղուած է Դարվին:

թէ Փարրուսի: Թէ Տաթեւացու գրածը, եւ ամէն քարոզ, որի մէջ Աստուծոյ անունը կայ՝ նոյն միջնադարեան խաւարի ծնունդը, նոյն ժողովուրդ քնացնող եւ դէպի յետ տանող միջոցը՝ ապա էլ ինչ էք սպասում: Չեր ապա-
գայ երանաւէտ ժամանակի «ինքն իրանից քարոզ յօրինող» քահանաներից. ինչ լուսաւոր գործունէութիւն, որ այնչափ գերադաս է՝ ոչ միջին դարերում՝ եւ ոչ «տգէտ, տիրացու» ժողովրդի մէջ, այլ լուսաւոր աշխարհի կեն-
տրոնում՝ գործող Փարրուսի տուածից. եւ ուր պէտք է ստանան նորա այդ գործունէու-
թեան համար անհրաժեշտ գիտութիւնը, եթէ ոչ նոյն եւ նման կենտրոններում, ուր Փար-
րոսն է իւր գիտութիւնը ստացել, ուր աղէ-
տալի դիպուածով ուսել ենք նաեւ մենք մեր
այնչափ քարկոծուած աստուածաբանութիւնը:
Երկու քան միմեանց հետ մի շփոթէք. եթէ
մենք բթամիտ ենք եղել եւ չենք սովորել
այն, ինչ որ հարկաւոր է. եթէ անշնորհք
ենք եղել եւ չենք կարողացել մեր սովորածը
գործադրել՝ դատապարտեցէք մեզ որչափ
կամենաք. քայց թո՛ղ տուէք, որ մեզնից աւե-
լի ընդունակները սովորեն եւ ուսուցանեն.
Իսկ եթէ այդ ճանապարհը բոլորովին փա-
կում է՝ ուրիշը ցոյց տուէք. դորա համար
մենք շատ շնորհապարտ կլինինք Ձեզ:

Ձը հեռանանք քուն խնդրից: Որչափ անըն-
դունակ էք Դուք հակառակորդի բերանից
մշմարիտ խօսք լսելու եւ որչափ կաշկան-
դուած է ձեր միտքը զանազան նախապաշա-
րումներով հոգեւորականութեան դէմ՝ դորա մի
փայլուն ապացոյց եւս այն, որ Դուք ամենա-
անխիղճ կերպով խեղաթիւրում էք մեր ասած-
ները, որպէս զի կարողանաք միջից Ձեր ցան-
կացած կողեր ազան միտքը հանել. իբր թէ
մենք կամեցել ենք հայ ժողովրդին ասել. «Թո՛ղ
ամէն ինչ եւ երկնքի մասին մտածիր»: Ձէ՛,
պ. Լէօ, եթէ դատապարտելի է այն եզրուիտը,
որ այդպիսի թելադրութեամբ խլում է միա-
միտ մարդոց ձեռքի հացը իւր վայելքի հա-
մար, պակաս դատապարտելի չէք նաեւ
Դուք ու Ձեզ նման թերուս ազատամիտները,
որ նոյն այդ խեղճ մարդոց կրծքից քրիստո-
նէական անկեղծ հաւատի ու քարոյականու-
թեան վերջին բեկորներն էք խլում: Ձեր

սին փառքի համար, ու դատարկ սովեւտու-
թիւններով նոցա դատարկ սրտերն ու զլուխ-
ները լեցնելով՝ պատուիրում՝ նոցա—մոռանալ
երկինքն ու միայն երկրի մասին մտածել, աշ-
խատել միայն, որ իրենց նիւթական քարեկե-
ցութիւնն ընդարձակեն: Բայց մենք այնքան
կոյր չենք, որ չտեսներք, թէ Դուք անգի-
տաբար էք այդպէս վարուում. մենք հաճու-
թեամբ կարողում ենք Ձեր այն վէպերն ու
հրապարակախօսական ակնարկները, որոնց
մէջ Դուք կենդանի, երբեմն նա եւ ազ-
նի զայրոյթով պախարակում էք մեր ժո-
ղովրդի քարոյական թերութիւնները, ի մաս-
նաւորի Ձեր ջատագոված կեղծ քաղաքա-
կութեան զուգընթաց թերութիւնները,—
եւ մենք ուզում ենք Ձեզ հասկացնել, որ այդ
մասամբ Ձեր ցանած սերմերի պտուղներն
են: Մենք Ձեզ ասել էինք. «Եթէ ստոյգ է,
որ կեանքը նիւթական, մարմնաւոր քարո-
ութիւնից դուրս ուրիշ նպատակ չունի, եւ
հոգեւոր, քարոյական խնդիրներով զբաղուելն
անստույգ է՝ ապա թող ոչ ոք իրաւունք
չհամարէ մեղադրելու դէպի Բագու դի-
մող երիտասարդներին, եւ ողբն ու աղաղակն
ի զուր են».
Իսկ այդ չի նշանակում՝ ասել
հայ ժողովրդին. «Թող ամէն ինչ եւ երկնքի
մասին մտածիր», այլ թէ՛ երկրի վերայ
ապրելով եւ միայն այստեղ անելիքը մտա-
ծելով հանդերձ, ոչ մի քայլափոխում մի՛
մոռանաք, որ երկինք կայ. հետեւիք քո նիւ-
թական քարոյութեանը, աշխատիր իւրացնել
քաղաքակրթութեան քարիքները եւ խոհե-
մութեամբ ու հեռատեսութեամբ քարեկեցիկ
կեանքի պայմաններ ստեղծել քեզ համար,
քայց առանց քո ազգային-հոգեւոր ինքնու-
րոյնութիւնը կորցնելու. առանց կորցնելու
քրիստոնէական այն կենդանի հաւատը, որ
ջերմ՝ ոգեւորութեան եւ վսեմ՝ զաղափարա-
կան սկզբունքների անսպառ աղբիւր է եղել
քո հայրերի համար՝ քարոյական ամբողջեան
անխորտակելի յենարան նեղութեան օրե-
րում. ապա թէ ոչ նիւթական քարեկեցիկ
կեանքիցդ ապականութեան մի ծահիճ կոյա-
նայ քո շուրջը, որի մէջ կիսեղոուիս ու կկոր-
ցնես քեզ հետ քո հայրերի թանկագին ա-
ւանդը: — Ձեր կարծիքով ուրեմն այսպիսի զա-

դափար արտայայտելը «աշխարհական առաջադիմութեան դէմ վայնասուն շարժարցնել» է։ Կարող ենք ձեզ հաւատացնել, որ վաղուց արդէն հնացած ու անպիտան զէնք էր գործ դնում կրկին. կրօնի ու քարոյականութեան անունից մի խօսէք, թէ չէ խաւարամիտ, յառաջադիմութեան թշնամի կանուանենք ձեզ, — այդ սպառնալիքն եւս ոչ մի տաւորութիւն չէ թողնում մեզ վերայ։ Իրաւունք ունիք արդարեւ պարծենալու, որ այդպիսի մարտար խաղերով մեծ յաջողութիւն էր ունեցել մինչեւ այժմ. ոչ միայն աշխարհական, այլ եւ «առաջադէմ» հոգեւորականներ խիստ շատ կան մեզանում, որոնք պատրաստ են զլուխը մահուն տալ, միայն թէ այդպիսի նախատական խօսքեր չլսեն Ձեզնից։ Մօտ օրերս Ձեր լրագրի թղթակիցը մի ընտրոշ դէպք էր յիշում։ — Ինչպէս Ախալքալաքի մի անշուշտ ոչ աստուածաբան, այլ «Մշակ»-ի դպրոցում սնուած ու զարգացած, քահանայ քացականչել է օրին մէկ օրը եկեղեցում։ «Կղեր, ազգի աներ»։ Զուարճացէ՛ք ուսումնական քահանայի հետ մէկ տեղ նորա անմատուցի սրամիտութեան վերայ. այդպիսի գոհարներից հիսած փառքի պսակը Ձեր ճակատից խլելու ցանկութիւն ու յաւակնութիւն չունինք։ Մենք միայն ասում ենք. գո՛ր չէ միթէ Ձեր վրդովմունքը, թէ ինչո՞ւ մի աշխարհական մարդ քարոզչիք է թարգմանել, քանի որ հայ ժողովուրդը, հակառակ Ձեր կարծիքի, այնքան յառաջադիմել է, մինչ գիւղական քահանաներն անգամ Ձեզ հետ միացած կոռում են կղերականութեան դէմ. եւ որովհետեւ Ձեզ նման հմուտ պատմաբաններն են դաս տուել, թէ ինչ է կղերականութիւնը՝ ամենայն պարզամտութեամբ, կամ յանդգնութեամբ, քրիստոնէական բոլոր սրբութիւններն արհամարհանքի ու ծաղրի առարկայ կդարձնեն, իրենց հազած վերարկուն էլ կհանեն ու դէն կշարտեն, եթէ Դուք նշան տաք, եթէ ակնարկէք միայն, որ միջնադարեան փառած քաներ են դորա, եւ արհամարհողը Ձեր ծափահարութեան կարժանանայ, յառաջադէմ ու լուսաւոր կհռչակուի՝ փոյթ չէ թէ քանի միսալ ուղեղ կամ գիտութիւն կունենայ իւր գլխում։

Եւ այս անգլխութիւնը իսկական լուսա-

ւորութեան ծաղրանկարը միայն համարելով մենք նորան էլ հակառակ չենք եղել, որ Դուք անգլխների մի ավերոջ քանակ քաշ էք տալիս Ձեր ետեւից՝ հաւատում եւ հաւատացնում, թէ յառաջադիմութեան պողոտայի վերայ էք. այլ կամենում ենք, որ հետեւողական լինիք. — կամ քարոզէք, թէ Եւրոպայում ու Ամերիկայում չգիտեն ինչ է լուսաւորութիւնն ու յառաջադիմութիւնը, Դուք էք առաջին աւետաբերն ու ճանապարհ քացանողը. կամ եթէ ընդունում էք, որ Ձեր բոլոր լուսաւոր զաղափարները Եւրոպայից էք փոխ առել՝ քիչ աւելի կարճ լեզու ունենաք, հաշիւ տաք Ձեզ նախ, թէ ինչպէ՞ս է այնտեղ իրերի դրութիւնը, եւ ապա լուսաւորութեան անունով պատգամներ կարդաք։ Եթէ Անգլիայում հազարաւոր փոքր ու մեծ Ֆարարներ կան եւ իւրաքանչիւրի քարոզը հազարաւոր մարդիկ են լսում ու կարդում՝ դորանից մենք ամենեւին Ձեր «ողորմելի» հետեւութիւնը չենք հանում, թէ ուրեմն հայոց տգէտ տիրացու ժողովուրդը ճիշտ եւ ճիշտ անգլիական ազգն է»։ այլ ուղղակի հակառակը. թէ հայ ժողովուրդը շատ եւ շատ յետ է անգլիական ազգից՝ հէնց այն պատճառով, որ նորա մէջ Ֆարարներ չկան, անթիւ կենդանի քարոզների եւ ծոխ քարոզազրքերի տեղ հրապարակ են հանում Ղամազեանի ու Եսաքեանի (աւելացրէք, եթէ հաճելի է Ձեզ, նաեւ Կ. Վ. ի. խնդիրը դորանով չի փոխուի) մի քանի ողորմուկ եւ տհաս փշթանքները, որոնք գրեթէ այն կերպով նոցա փոխարինել կարող են, ինչ կերպ Լէօներն իբրեւ գիտութեան ու լուսաւորութեան ներկայացուցիչներ փոխարինում են Դարվինին ու Սպենսէրին։ Բայց անգլիական ազգը մի ուրիշ կողմից եւս աւելի քաղդաւոր է. մինչդեռ Դարվիններն ու Սպենսէրները իրենց մեծ խելքովն ու մեծ գիտութեամբ գիտեն, թէ որչափ սահմանափակ է իրենց ճանաչողութիւնը, եւ բնքը չեն լինում նոցա մէջ, որ երբ ընտրութեան քաղմագան երեւոյթները դիտելուց եւ ծայր չգտնելուց յոգնած մանրադիտակը վայր են դնում, փոխարէնը աղօթագիրք ու տաղարան են ձեռք առնում եւ Աստուծոյ տունը գնում՝ չերմոտանդութեամբ լսելու քարոզչի ասածները յաւիտենականի

ու անսահմանի մասին, — մեր Լէօնեցին՝ իրենց փորք խելքով ու գիտութեան սեղանից ժողոված փշրանքներով, կարծում են, թէ արդէն ցած են ընկել Յաւիտենականին իւր ամբողջ եւ Անսահմանը բուռի մէջ սեղմել:

Սակայն ի՞նչ ենք զուլա ցաւեցնում, մի քան որ «ստուգաբանութիւններ» ամէն տեսակ պատճառաբանութիւնները հերքելու շատ դիւրին միջոց ունիք Դուք, մի քանի թունդ բառեր կշարտէք կրկին՝ «ողորմելի, դատարկ կարաս», փարիսեցութիւն, ծամածռութիւններ», եթէ հարկաւոր եղաւ մի քանի մութ ակնարկներ էլ կանէք «վանականների փող դիզելու վիրաւորագութեան», «աղաներին երկրպագելու» եւ ուրիշ լաւ լաւ յատկութիւնների մասին — եւ կենէք կալարծնաւք, թէ պատին սկզբից նոցա: — Մենք փորձեցինք բացատրել, եթէ հնարաւոր է, այդպիսի վարմունքի (աւելին չասենք) անտեղութիւնը, ընդունեցէք մեր խօսքերն ինչպէս կամենում էք, բայց թո՛յլ տուէք մի անգամ էլ յիշեցնել, որ եթէ Ձեզ չենք պատասխանում՝ ինչպէս հարկաւորն է եւ չենք պատասխանի՝ պատճառն այն չէ միայն, որ հոգեւորականի թեւքերը երկայն են, այլ եւ որ համոզուած ենք, թէ ամէն անտեղութիւն իւր պատասխանն ու իւր պատիժը իւրմէջն ունի: Դորա համար մենք չենք էլ վերաւորում իսկապէս Ձեր ասածներից, այլ անկեղծօրէն ցատում ենք, որ այդպէս չարաչար էք գործ դնում Ձեր գրիչը՝ թէ Ձեզ, թէ Ձեր ընթերցողների համար միանգամայն անօգուտ եւ միտքեցուցիչ կերպով: Հազարաւոր ընթերցողներ ունիք Դուք, եւ հաւատացած ենք, որ ցանկանում էք կրթիչ ազդեցութիւն ունենալ նոցա վերայ, առողջ լուսամիտ զաղափարներ տալ, դորա մէկ միջոցն էլ՝ համարում էք Ձեր Ինքնուրույն, քննադատող, ուղղութիւնը, որով եւ յաճախ պարծենում էք եւ Ձեր Ինքնուրույն համարում: Ժամանակ չէ՞ հասկանալու, որ այլ է խիստ լեզու եւ այլ հայրոցող լեզու, այլ է խիստ ու արդարամիտ քննադատութիւնը եւ այլ ճարձատուն անմիտ բանաբարութիւնը: Աստուածաբաններն քննադատում էք, շատ լաւ, ո՞վ է քան ասում, բայց նոցա իսկական գործերը, իսկական վարմունքը քննադատեցէք, եւ ո՛չ թէ

քաժու աղացքների հետ կոռեցէք, քննադատեցէք խիստ, շատ խիստ կերպով, բայց առանց անծի ու կոշման պատուին դիպելու: Ի՞նչ խրատ պէտք է վերցնեն նոքա օրինակ, երբ «ստուգաբանական յարգնութեան ամենափայլուն մի վկայական» էք համարում այն, որ նոցանից մէկը, ինչ էլ լինի՝ այնուամենայնիւ քարծր, կրթութիւն ստացած, աշխարհահռչակ գիտնականների տարիներով աշակերտութիւն արած եւ նոյն իսկ նոցա առաջ գրով ու ընդանացի ինքնուրոյն կարծիքներ յայտնած մի մարդ, համարձակուում է որեւէ Բժ. Վ. Արծրունու գրուածների մասին դատողութիւն տալ, ի՞նչ խրատ պէտք է վերցնեն Ձեր ընթերցողները, երբ ընդունակ լինին հարցնելու, իսկ Ձեզ համար յանդգնութիւն չէք համարի ի հարկէ, եթէ նոյն իսկ Վերլուծին ամենախիստ լեզուով քննադատելու լինիք:

Դուք յաճախ նախատալից յանդիմանութիւններ էք կարդում ու զարմանք յայտնում, որ Ձեր քննադատութիւններն ու մերկացումները ազդեցութիւն չեն գործում հայ հոգեւորականութեան ու եկեղեցական գործերի վարիչների վերայ. ամէն ինչ իւր նախկին վիճակի մէջ է մնում: Ասացէք խնդրեմ, ի՞նչ օգուտ էք սպասում այնպիսի քննադատականներից, որոնց մէջ անձերի, գործերի, երեւոյթների ո՛չ մի խտրութիւն չի դրուում՝ Փարբարի քարոզները նոյնչափ անպէտք են համարուում, որչափ եւ Ղամագեանիներ, Ճեմարանի քարտուղարի լատերերով տուն գնալը նոյնչափ դատապարտելի եւ Հայոց ազգին վնասակար գործ նկատուում, որչափ եւ Գանձասարի, Խոթաւականի ու Մարցի կալուածների առանց շահագործութեան թողնելը: Ինչպէս էք կամենում շարիքն ուղղուի, քանի որ շատ անգամ շարիքի դէմ՝ կոռուողներին համարում էք նոյն այդ շարիքի պատճառ, եւ ուրեմն հրաւիրում Ձեր ընթերցողներին ձեռքն եկած արգելքները հանելու այդպիսիների դէմ: — Ո՛չ մի հասկացողից ծածուկ չէ, որ ս. Էջմիածնի միաբանութիւնն այժմ՝ գիտութեամբ շատ աւելի լաւ պատրաստուած ոյժեր ունի իւր մէջ, քան ս. Ղազարի միաբանութիւնը: Աստուածաբանները մի կողմ՝ մասն. ո՛ւմ ցոյց

կտաց Վենետիկում որ ունենար գիտութեան այն պաշարը՝ արդի եւրոպական ուղիղ իմաստով ինչ որ օրինակ մի Մետրոպ վարդապետ ունի։— ինչո՞ւ այդ գիտութիւնը չի գործադրուում կամ թուում է թէ չի գործադրուում։ Ինչո՞ւ ս. Էջմիածնի միաբանութեան գրական վաստակները այժմ եւս շատ աւելի պակաս են քան Վենետիկինը Դուք այն հարցըք ու այն քննեցէք. բայց Դուք ելնում ծայնակցում էք Բասմաջեաններին։ որոնց համար մանրավաճառութիւնն ու գիտութեամբ կամ գրականութեամբ զբաղուիլը միատեսակ արհեստներ են։ Թէ ս. Էջմիածինը դժոխք է ու ս. Ղազարն արքայութիւն, եւ կարծում էք մեծ քան արիք՝ Էջմիածնի բոլոր պակասութիւնները մերկացրիք. հեռաւորը գովելով եւ մօտիկը պախարակելով անաշտ քննադատներ հանդիսացաք ու շատ զեղծումների առաջն առաք, խաբուածների աչքը բաց արիք։ Արդիւնքն ի՞նչ է սակայն. նոցա որոնք Ձեր ասածներին հաւատում են, պէտք է հաստատուին հետզհետէ այն նախապաշարման մէջ, որ Էջմիածնից ու հայ հոգեւորականից ոչինչ լաւ քան ելնել չի կարող. եւ պէտք է ուրեմն ծեռնածափ լինին նոցանից, ցանկան ու աշխատեն ծշտել Ձեր ասածները՝ արգելք լինելով կրկին եղած լաւ կողմերի զօրանալուն։ Իսկ նոքա որոնք Ձեր սխալ ու միակողմանի լինելը տեսնում են եւ հեշտութեամբ կապացուցանեն, թէ ինչպէս Դուք սպիտակն եւս սեւ էք ներկայացնում եւ միայն Ձեր ծայրահեղ կեցութեան շնորհիւ է, որ ահա տարիներէ ի վեր ոչինչ լաւ քան այլ եւս այստեղ չէք տեսնում՝ կարող են օգուտ քաղել դորանից եւ Ձեր ուղիղ դիտողութիւններն եւս կապակածելի դարձնել անորոշութեան մշուշի մէջ ծածկուած պահելով իսկական թերութիւնները։ Հաւատացած եղէք, որ իրականութեան մէջ այդպէս էլ լինում է. անպայման ժխտումն քննականաբար պէտք է նոյնպիսի ժխտում յառաջ բերէ։ Կուսակցական ոգուն յատուկ է ամէն տեղ հակառակորդի մէջ մոլել կողմեր որոնելն ու լուսաւորն անտես անելը. բայց ցան այն է, որ Դուք այդպիսի նեղ կուսակցական ոգով նայում էք ոչ միայն Ձեր իսկական ու երեւակայական հակառակորդնե-

րի վերայ, այլ անձերն ու նոցա հետ կապ ունեցող հաստատութիւնները շփոթելով վերջիններիս դէմ եւս գործ էք դնում այն միջոցը, որով տապալել են կամենում։ մինչդեռ Դուք կամենում էք անշուշտ շինել ու քարհնորդել։ Մեր վերջին խօսքն ու խորհուրդն այս է. եթէ պահանջ էք զգում որ լրջութեամբ վերաբերուին դէպի Ձեր քննադատութիւնները՝ ինքներդ փոքր ինչ աւելի լուրջ, արդարամիտ, լայնսիրտ եւ քաղմակողմանի եղէք. ամէնից առաջ՝ աւելի պատշաճ լեզու գործ դրէք։

Կ. Վ.

ԿՐՕՆԻ ԷՍԻԹԻԻՆԵՐ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ՏԵՍԱԿԷՏԻՅ

Արարատի Յուլիս—Օգոստոս համարում մենք ծանօթացրինք ընթերցողներին մի նշանաւոր Աստուածաբանի կարծիքների հետ՝ քրիստոնէական կրօնի մասին. այժմ կամենում ենք մի հոգակաւոր փիլիսոփայի մտքերն ու դատողութիւնները նոյն կրօնի և առհասարակ կրօնների մասին ի մի ամփոփել, որպէս զի ընթերցողները տեսնեն, թէ ի՞նչ են մտածում ու խօսում կրօնի մասին 20-րդ դարու եւրոպայի լուսոյ այդ կենտրոնի պատուականադոյն ներկայացուցիչներն ու ազգայ սերունդ պատրաստող իմաստուն գլուխները։

Արարատի մէջ յիշուած էր, թէ ինչպէս երկու տարի առաջ Իենայի համալսարանի բնական գիտութիւնների ուսուցչապետ Հեքէլը (Häckel) իւր «Տիեզերքի հանելուկը» (Welträthsel) գրքով հանդէս եկաւ և մօնիսմուսը կամ աւելի ճիշտ՝ նիւթապաշտական համաւատու ածութիւնը իբրեւ միակ ուղիղ աշխարհայեցողութիւն հոգակեց և դրանով մեծ ազմուկ հանեց. այժմ նոյն Իենայի համալսարանից յառաջ է բերուում մի նոր ուղղութիւն, բոլորովին հակառակ առաջինի, որի առաջնորդն ու քարոզիչն է անուանի գիտնական Բուդօլֆ Եյկեն (Eucken)։ Մենք թողնում ենք նրա ուրիշ խիստ հետաքրքրական աշխատութիւնները, որպիսիք են «Ներ-